1313·

Ես Սարկաւագ Լեհացիս Թվին ՌԿ երկուսին հանդիպեցայ Մսիր քաղաքին. ով ընթերցողք այսըմ տառիս։ [Մաշտոց, ի Պեռլին]։

1613·

Կատարեցաւ քերական գիրքս. և Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն։ Թվ. ՌԿԲ. ես անարժան մեղաւոր Զատիկ՝ Պր. Պողտանայ որդի. գրեցաւ Թուխտս. վայ ինձ մեղաւորիս։ [Աս որս գիրք, յԷջմիածին]։

1615·

Ես Յակոբ Երէցս Թոխաթեցի Թարգմանեցի զգեղեցիկ Պատմութիւնս (Փաւնցիանոսի) ի լաղինական գրոց ի հայ գիր. ի խնդրոյ վարժապետին իմոյ Տէր Յակոբին՝ որ ասեն Այվաթենց, Թվին ՌԿԳ. փետրվար ամսոյ ԺԳ, ի երկիրն Լեհաց, ի քաղաքն Զամաւսցա։ Աղաչեմ զձեզ, յորժամ որ փոխարկէք, զանունս մեր մի՛ յապաղէք գրել ի տեղիս խորագրոց. և ասացէք, թէ, Աստուած ողորմի. ամէն։ [Ի Բարիզ. գրատան։ Նոյն տարին Յակոբ Թոխաթցի թարգմաներ է ի Զամոսցա և Էօրն իմաստասիրաց իսօքերն]։

1616·

Փառք համագոյ համազօր համապատիւ համատարած Ս. Երրորդութեան... որ ետ կարողութիւն ոգոյս սուտանան գրչիս յիմար և տարտամ եղեգնագրծիս, հասանել ի վերջին գիծ տառիս. որ կոչի Աբարածոց մեկնիչս, ի լաւ և յընտիր օրինակէ։.. Յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զԱարգիսն գրպիրն, որ ետ գրել զԱբարածոց մեկնիչս ի վայելումն անձին իւրոյ. զոր Տէր Աստուած վայելել տացէ նմա մինչ ի խորին ծերութիւնն։ Գրեցաւ սա ի թուին ՌԿԵ, ի քաղաքն Իլով, ի թագաւորութեանն Զիկմոնտին և ի կաթողիկոսութեան Մելքիսեթին. ձեռամբ մեղապարտ Գրիգորին, մականուամբ Տօմժիրպին։ Եւ ինձ մեղապարտ Գրիգորիս գրչի, և իմ վարպետին Տէր Դաւթի՝ ողորմութիւն և թողութիւն մեղաց ի նմանէ։ [Վարդան, Մեկն. Աբարածոց. ի Ս. Ղազար]։

1617·

Ամենակարող զօրութեամբն Աստուծոյ կազմեցաւ նոր տպագիրս երկիրն Իլախաց ի քաղաքս Լէվ կոչեցեալ, ընդ հովանեաւ Ննջման Ս. Աստուածածնին, ձեռամբ յոգնամեղ Քարմատանեէնց Յովանէս իրիցուս. զոր հոգս տարեալ մեծաւ աշխատութեամբ և բազում ծախիւք՝ տարի մի բոլոր արուեստաւորաց հետ դատեցա մինչեւ գիրն ի գլուխ հանի, և նոր կազմարան սահմանեցի, և վասն փորձի նախ զերգսն Դաւթի մարգարէին տպագրեցի, ի օ-